ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13", հեռ.՝ (011) 90 00 01

№ 18-01 Ռ-2023
«31» 10 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ (այսուհետ Պատվիրատուի ղեկավար) ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման կողմից 11.09.2023 թվականին ներկայացված զեկուցագրով «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ին (այսուհետ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը.

ՊԱՐԶԵՑ

1. **Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված փաստերը և պահանջը.**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, հայտնում եմ, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի միջև սույն թվականի մարտի 28-ին կնքված ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ն պարտավորվել է մատակարարել ապրանքներ, սակայն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետով սահմանված պահանջը՝ առաջարկում եմ միակողմանիորեն ամբողջությամբ լուծել պայմանագիրը: Հայտնում եմ, որ ընկերությունից պետք է գանձել Պայմանագրի կատարման ապահովումը

205000 (երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով, և որակավորման ապահովումը՝ 307500 (երեք հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով: Միաժամանակ հայտնում եմ, որ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ հայտարարությունը պատշաճ կարգով հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

2. Էական նշանակություն ունեցող փաստերը

Էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի միջև 2023 թվականի մարտի 28-ին կնքվել է ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

1. «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:
2. Հիմնավորվելով Պայմանագրի 2.1.1-ին կետով սահմանված պահանջներով՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն 2023 թվականի սեպտեմբերի 11-ից միակողմանիորեն ամբողջությամբ լուծել է ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/15 ծածկագրով կնքված գնման Պայմանագիրը, որի վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվել է 11.09.2023 թվականին «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ին՝ միաժամանակ առաջարկելով վերջինիս սահմանված ժամկետում վճարել Պայմանագրի կատարման ապահովումը 205000 (երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով, և որակավորման ապահովումը՝ 307500 (երեք հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:
3. «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի կողմից չի ապահովվել վերոհիշյալ պահանջը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Վերոհիշյալ որոշումը կայացնում եմ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

1. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

Այսպիսով, «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել, որի վերաբերյալ Պայմանագրի կողմը պատշաճ կարգով ծանուցվել է պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու որոշման վերաբերյալ՝ միաժամանակ ծանուցվելով նաև վերջինիս սահմանված ժամկետում վճարել Պայմանագրի կատարման ապահովումը 205000 (երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով, և որակավորման ապահովումը՝ 307500 (երեք հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով: Մասնակցի կողմից չի կատարվել վերոհիշյալ պահանջը:

Ուսումնասիրելով հիմքերը արձանագրում եմ, որ «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասի խախտում:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հիմքերը՝ «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, գնահատել բավարար:

2. «Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»-ի ներքոհիշյալ տվյալները համապատասխան տվյալներով ուղարկել լիազոր մարմին՝ Ֆինանսների նախարարությանը՝ «Փայլակ Հակոբի

Թևանյան ԱՁ»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանում	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«Փայլակ Հակոբի Թևանյան ԱՁ»	26590795	Երևան Գյուլիքևխյան 23 փողոց, բնակարան39		X		31.10.2023թ.

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանը հաջորդող օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԵՐԱՍԻՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ գնումների բաժնի պետ
Մոնա Ղազարյան, հեռ. 011 90 00 49